

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Զիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժիների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Միլվա Խաչատրյան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար
Կարեն Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով

**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ  
2011Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ**

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ֆերոմոլիբդենի, մաքուր մոլիբդենի ջարդոնի և կալիումի պերոենատի արտադրությունն է: Արտադրության հումքն Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններից՝ համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

- «Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոնքրետ» ՓԲԸ (ՀՀ) - Մոլիբդենի խտանյութի գնում
- «ՆՕՁԷ Ի Լ » Ի ԱԻ (ՌԴ) -Ալյումինի փոշու գնում
- «Վ. Սինասյան» Տրեյդինգ կոմպանի (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
- Ի Ի Ի “Ճոնձեթո՛ ի ծծ” (Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
- “Օձձձձ ժձձեձ” (Ուկրաինա) -Ալյումինի փոշու գնում
- “ENERGY INVEST” (Վրաստան) – Հեղուկ ամոնյակի գնում

Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես նախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2011 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 7,723,115,300 դրամ կամ 20,636,200 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում իրացումը կազմել է 7,491,791,000 դրամ կամ 20,018,200 ԱՄՆ դոլար: Արտադրության ծավալի և իրացման ամփոփ տվյալները բերված են թիվ 1 և թիվ 2 աղյուսակներում:

Աղյուսակ 1

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2011թ. 2-րդ եռամսյակ**

Արտադրվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Ֆերոմոլիբդեն	տն	737.0	6,144,572.1	16,418.4
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	126.0	1,572,614.5	4,202.0
Կալիումի պերոենատ	կգ	4.3	5,928.7	15.8
Ընդամենը			7,723,115.3	20,636.2

Աղյուսակ 2

**«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2011թ. 2-րդ եռամսյակ**

Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Ֆերոմոլիբդեն	տն	755.0	6,275,956.5	16,841.0
Ֆերոմոլիբդենի գների վերահաշվարկ*	-	-	-229,885.1	-614.2
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	120.0	1,497,352.5	4,000.9

Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Մաքուր մոլիբդենի ջարդոնի գների վերահաշվարկ*	-	-	-69,331.8	-185.2
Կալիումի պերռենատ	կգ	0.0	0.0	0.0
Հյուրանոցային ծառայություն	-	-	17,698.9	47.3
<b>Ընդամենը</b>			<b>7,491,791.0</b>	<b>20,018.2</b>

\* Հաշվետու եռամսյակում արտադրանքի վաճառքից հետո ընկած ժամանակահատվածում արտադրանքի գները նվազել են, այդ պատճառով դրանց դիմաց վճարվել է ավելի ցածր գին:

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից ամենաէականը Ընկերության արտադրանքի և դրա համար անհրաժեշտ հումքի միջազգային գների փոփոխությունն է, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության շահույթի վրա: Հաշվետու եռամսյակում և՛ հումքի, և՛ արտադրանքի գները նվազել են: Հումքի և արտադրանքի գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար նույնպես նվազել են:

Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Արտարժույթների փոխարժեքները հաշվետու եռամսյակում համեմատաբար կայուն են եղել, այդ պատճառով դրանց տատանումները Ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա քիչ են ազդել:

Նշված երկու գործոններն էլ իրենց անորոշությամբ էապես կազդեն մասնաճյուղի հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2011թ. II եռ.**

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-6,834,715
Իրացման ծախսեր	-735
Վարչական ծախսեր	-172,421
Գործառնական գործունեությունից շահույթ	483,920
Այլ գործառնություններից շահույթ	-4,197
Այլ ոչ գործառնական շահույթ, որից՝	2,449,584
<i>Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ</i>	<i>-24,763</i>
<i>Շահութաբաժին</i>	<i>2,249,999</i>
<i>Ավանդի %-ին եկամուտ</i>	<i>313,784</i>
<i>Ակտիվներին վերաբերող շնորհներից</i>	<i>9,015</i>
<i>Վարկերի և փոխառությունների գծով</i>	<i>-45,743</i>
<i>Այլ շահույթ (վնաս)</i>	<i>-52,708</i>
2011թ. 2-րդ եռամսյակի շահույթ	2,929,307
Շահութահարկի գծով ծախս (նվազագույն շահութահարկ)	-144,087
2011թ. 2-րդ եռամսյակի զուտ շահույթ	2,785,220

<b>Ցուցանիշ</b>	<b>Հազ. դրամ</b>
Դեբիտորական պարտք	3,434,224
Կրեդիտորական պարտք	426,845

Աղյուսակ 4

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2011թ. II եռ.**

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>01.07.2011 թ.</b>
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	62111.5
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	11.7%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	10.8%
Զուտ շահույթի մարժա (NPM)	27.4%
Կապիտալի համարժեքության գործակից	98.3 %
Ֆինանսական կախվածության գործակից	1.8%
Բացարձակ իրացվելության գործակից	37.5
Ընթացիկ իրացվելության գործակից	45.5
Ընդհանուր իրացվելության գործակից	51.0
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	160.4
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	2.3
Պաշարների շրջանառելիության գործակից	6.1
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	60.1
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.2
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	86.3

Ընկերության աշխատավարձի ֆոնդը՝ 253,129.3 հազ. դրամ է, աշխատողների միջին ցուց. թիվը՝ 541 մարդ, իսկ միջին աշխատավարձը՝ 155,964 դրամ:

**2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:**

Ընկերությունը ներկայում Տիգրան Մեծ պողոտային հարող իրեն պատկանող տարածքում շարունակում է իրականացնել լայնածավալ շինարարական աշխատանքներ:

Զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ չեն արվել: